
ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ (1923-1925 ԹԹ.)

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Պարսկաստանի հետ Հայաստանի իշխանությունները միշտ էլ ունեցել են բարիդրացիական հարաբերություններ: Գիշտ է, Հայաստանում 1918 թ. սկսած պետական տարբեր կարգեր են եղել, այնուամենայնիվ երկրում պետական կարգերի փոփոխմամբ չի փոխվել Պարսկաստանի թե՛ տեղական, թե՛ կենտրոնական իշխանությունների դիրքորոշումը հայերի և Հայաստանի հանդեպ: Ըստ այդմ՝ թե՛ 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետության օրոք և թե՛ 1920-1922 թթ. խորհրդային իշխանության տարիներին Պարսկաստանի հետ առևտրական հարաբերությունները օգնեցին սովի և համաճարակների հաղթահարմանը երկրում: Մտնելով ԽՍՀՄ կազմի մեջ՝ խորհրդային Հայաստանի իշխանությունները չնահանջեցին Պարսկաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունները շարունակելու բարի ավանդույթից:

Նշված ժամանակաշրջանի խորհրդա-պարսկական հարաբերություններին իր «Установление и развитие советско-иранских отношений (1917-1927 гг.)»¹ գրքում անդրադառնում է խորհրդային պատմաբան Ի. Ա. Յուսուպովը: Խորհրդային Հայաստանը, լինելով ԽՍՀՄ անդամ երկիր, չէր կարող անմասն մնալ այդ հարաբերություններին:

Հայ պատմաբաններից հայ-պարսկական հարաբերությունների լուսաբանմանն անդրադարձել է պրոֆեսոր Է. Ջոհրաբյանը իր «Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները 1920-1922 թթ.»² աշխատությունում, որը եզակի է իր տեսակի մեջ, և մինչ օրս 1918-1922 թթ. հայ-իրանական հարաբերությունները քննելիս ուսումնասիրողները առաջնորդվում են հենց այս գրքով: Սակայն պետք է նշել, որ պրոֆեսոր Է. Ջոհրաբյանը իր ուսումնասիրությունն իրականացրել է մինչև 1922 թ. դեկտեմբեր, այսինքն՝ մինչև խորհրդային Հայաստանի ԽՍՀՄ անդամ դառնալը: 1923 թ. սկսած՝ հայ-իրանական և՛ քաղաքական, և՛ առևտրական հարաբերություններն ուսումնասիրված չեն, և այս հոդվածն առաջին փորձն է ուսումնասիրելու Անդրֆեդերացիայի շրջանակներում հայ-պարսկական երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների պատմությունը 1923-1925 թթ.:

1923 թ. խորհրդային Հայաստանի իշխանությունները քայլեր են ձեռնարկում Պարսկաստանից՝ դեռևս 1921 թ. սկսած հացահատիկի ներկրումը

¹ Տե՛ս **Юсупов И. А.** Установление и развитие советско-иранских отношений (1917-1927 гг.). Ташкент, 1969:

² Տե՛ս **Է. Ա. Ջոհրաբյան**, Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 1985:

շարունակելու ուղղությամբ: Սակայն հանդիպում են որոշ դժվարությունների: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ այդ տարի հացահատիկի սակավության պատճառով պարսից իշխանությունները սահմանափակել էին ցորենի արտահանումը երկրից: Այդ մասին 1923 թ. հունվարի 3-ին Հայպետառի³ վարչությանն ուղարկած զեկույցում նշում էր Հյուսիսարևմտյան Պարսկաստանում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Սերո Մանուցյանը: Չեկույցում խոսվում էր նաև այն մասին, որ Թավրիզում հացահատիկի գները Երևանի շուկայի համեմատ զգալի բարձր են, այդ իսկ պատճառով Թավրիզից հացահատիկի ներկրումն այդ պահին նպատակահարմար չէ⁴:

Պարսկաստանից հացահատիկի և այլ ապրանքների ներկրման ուղղությամբ Հայառը սկսում է քայլեր իրականացնել միայն 1924 թ. դեկտեմբերից, այսինքն՝ Սերո Մանուցյանի նամակից գրեթե երկու տարի անց: Այս դադարը կարող էր պայմանավորված լինել այն հանգամանքով, որ հացահատիկի գները Պարսկաստանում նվազել էին միայն երկու տարի անց, և արդեն ձեռնտու էր այնտեղից ներկրում իրականացնելը:

Ինչպես այլ երկրների դեպքում, Պարսկաստանում առևտուր իրականացնելու համար Հայառը որոշում է դիմել մասնավոր անձանց օգնությանը՝ նախօրոք այդ մասին տեղյակ պահելով ժողկոմխորհին:

1924 թ. դեկտեմբերի 17-ին Հայառի վարչությունը գրություն է ուղարկում ժողկոմխորհի քարտուղար Պարզյանին և նշում, որ նրան է ուղարկվում այն պայմանագիր-նամակի պատճենը, որը Հայառը ցանկանում էր կնքել քաղաքացի Միքայել Թեյմուրազյանի հետ: Գրության մեջ խնդրվում էր հայտնել, թե ինչ կարծիքի է ժողկոմխորհը այդ հարցում և չունի՞ արդյոք որևէ առարկություն⁵: Դեկտեմբերի 18-ին ժողկոմխորհը Հայառին տալիս է իր համաձայնությունը⁶:

Ստանալով ժողկոմխորհի համաձայնությունը՝ Հայառը ձեռնամուխ է լինում Միքայել Թեյմուրազյանի հետ պայմանագիր-նամակի ստորագրմանը, որը նրան է ուղարկվում դեկտեմբերի 19-ին: Այն բաղկացած էր 13 կետերից: Պայմանագրի առավել կարևոր կետերն էին. ա) Հայառը համաձայնվում էր օգտվել Թեյմուրազյանի ծառայություններից: Թեյմուրազյանի գործունեությունը պետք է իրականացվեր միայն Պարսկաստանում՝ մասնավորապես Թավրիզում: բ) Գործունեության բնույթը պետք է լիներ չրի ձեռքբերումը, հատկապես չամիչ, ծիրանի չիր, նուշ և այն ամենը, ինչ նրան կպատվիրեր Հայառը: գ) Թեյմուրազյանը պետք է պահպաներ արտաքին առևտրի բոլոր կանոնները: Նրա գործունեությունը պետք է համաձայնեցվեր Պարսկաստանում ԽՍՀՄ առևտրային ներկայացուցչության կամ նրան փոխարինող մարմնի հետ: դ) Թեյմուրազյանը պետք է գործեր միմիայն Հայառի համար: ե) Յուրաքանչյուր գործարքի համար նա ստանալու էր ապրանքի արժեքի 5 %-ը⁷:

³ ՀՍԽՀ-ում պետական-կոոպերատիվ առևտուրը տնօրինում էր Հայպետառը, որը 1923 թ. փետրվարի 10-ին վերանվանվեց Հայառ:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 554, ց. 1, գ. 52, թ. 148:

⁵ Տե՛ս նույն տեղը, գ. 224, թ. 3:

⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 2:

⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 5:

Պարսկաստան մեկնելու համար Թեյմուրազյանին անհրաժեշտ էր ստանալ ՀՍԽՅ ներքգործողկոմի թույլտվությունը: Այդ խնդրով դեկտեմբերի 20-ին Հայառը դիմում է հիշյալ գերատեսչությանը՝ նշելով, որ Միքայել Թեյմուրազյանին Հայառի գործերով Ջուլֆայի վրայով անհրաժեշտ է անցնել Թավրիզ⁸:

ՀՍԽՅ ներքգործողկոմի թույլտվությունը չի ուշանում, և արդեն դեկտեմբերի 22-ին Հայառի վարչությունը Թեյմուրազյանին վկայական է տալիս առ այն, որ նա իրոք Հայառի առևտրական գործակալ է և գնումների համար մեկնում է Պարսկաստան⁹:

Ամենայն հավանականությամբ պարսկական իշխանությունները Հայառի տված վկայականով չեն թույլատրում առևտրային գործակալին մըտնել Պարսկաստան, ուստի Թեյմուրազյանին անցագիր տրամադրելու խնդրանքով Հայառը 1925 թ. հունվարի 8-ին դիմում է Երևանում Պարսկաստանի գլխավոր հյուպատոսին: Դիմումի մեջ նշված էր, որ Հայառն անհրաժեշտ է համարում առևտրական կապեր հաստատել պարսկական շուկայի հետ և այդ նպատակով Թավրիզ է ուղարկում իր առևտրային գործակալ Թեյմուրազյանին: «Հայառի վարչությունը լիահույս է, որ կարճ ժամանակում Թեյմուրազյանին կտրվեն անհրաժեշտ փաստաթղթեր՝ Թավրիզ մեկնելու համար»¹⁰, - գրված էր նամակի վերջում:

Նույն օրը Հայառի վարչությունը հեռագրում է Անդրպետառի՝ Թավրիզի գրասենյակ և հայտնում, որ Թեյմուրազյանը ուղարկվում է Թավրիզ՝ Հայառի համար գնումներ կատարելու նպատակով: Նամակում խնդրվում էր ցույց տալ ամեն տեսակի աջակցություն¹¹:

Հունվարի 8-ին Հայառը նամակի մի հեռագիր էլ ուղարկում է նաև Ջուլֆայի գործակալություն¹²:

Թե հունվար ամսին Թավրիզում ինչ գործունեություն է ծավալել Թեյմուրազյանը, արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից հաջողվեց պարզել միայն այն, որ հունվարի 22-ին Թեյմուրազյանը Պարսկաստանում, ի մասնավորի՝ Թավրիզում տիրող վիճակի մասին գրություն է ուղարկել Հայառի վարչություն, որի պատասխանը նրան է ուղարկվել հունվարի 31-ին: Նամակում Թեյմուրազյանը հայտնել է Թավրիզի շուկայում առկա տարբեր ապրանքների գները: Հունվարի 31-ին նրան ուղարկված պատասխան նամակում Հայառին ամենից շատ հետաքրքրել է ցորենի հարցը, որի գինը, ըստ Թեյմուրազյանի, Մարանդում 1 փութն արժեր 4 ղան, այսինքն՝ 89 կոպեկ:

Հայառի վարչության հղած նամակում նշվում էր, որ եթե այդ տեղեկությունը ճիշտ է, ապա անհրաժեշտ է շտապ և որքան հնարավոր է շատ ցորեն ձեռք բերել: Նամակում խնդրվում էր նաև ճշտել Մարանդում առկա ցորենի խմբաքանակը և գինը, սակայն միաժամանակ խորհուրդ էր տրվում, որ Թեյմուրազյանը վարչությանը հղելիք հեռագրում չգործածի ցորենի բառը, այլ նշի միայն գինը և քանակը¹³:

⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 1:

⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 10:

¹⁰ Նույն տեղում, թ. 11:

¹¹ Տե՛ս նույն տեղը, թ. 12:

¹² Տե՛ս նույն տեղը, թ. 14:

¹³ Տե՛ս նույն տեղը, թ. 16:

Նամակի այս վերջին պարբերությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայառի վարչության՝ Պարսկաստան ուղարկված և այնտեղից ստացած հեռագրերը, ամենայն հավանականությամբ, ստուգվում էին: Կար ևս մեկ հանգամանք. այս նույն ժամանակահատվածում Հայաստանը հացահատիկ էր ներկրում նաև այլ երկրներից, և ըստ երևույթին Անդրկովկասի իշխանությունները չպետք է իմանային, թե ինչքան հացահատիկ է մտնում Հայաստան: Իհարկե, հեռագրերն ընթերցելու հանգամանքը չէր կարող իրականացվել առանց Մոսկվայի գիտության և ցանկության: Բացի այդ՝ Թավրիզի շուկայում կար նաև թաքուն մրցակցություն անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների միջև: Նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր ձեռք բերել մեծ քանակությամբ հացահատիկ իրեն ձեռնտու գնով, և այդ ներկայացուցչություններից որևէ մեկի դուրս գալը շուկայից զգալիորեն կթեթևացներ մնացածների գործը: Թավրիզի շուկայում հատկապես ակտիվ էր Հայառը, և այս հանգամանքը չէր կարող չանհանգստացնել մյուսներին:

1925 թ. փետրվարի 7-ին Անդրպետառի կառավարչի տեղակալ Ավագովը հեռագիր է ուղարկում Հայառի վարչությանը, որում ներկայացվում էր Թավրիզում Անդրպետառի լիազոր Կայֆիկից ստացված նամակի հետևյալ հատվածը. «Ես արդեն գրել եմ այստեղ Հայառի ներկայացուցչի ժամանման մասին, իսկ մոտ օրերս իմացա, որ Հայառը Ռուս-պարսկական բանկի միջոցով Խոյուն պետք է վճարի բավականին մեծ գումար՝ մոտ 3.000 թուման, և ներկայացնում եմ իմ և գլխավոր հյուպատոսի կարծիքն այս հարցի վերաբերյալ: Դժվար թե Հայառը կարողանա այստեղ մեծ ծավալի աշխատանք իրականացնել, բայց նրա գործունեությունը կարող է նյարդայնացնել սնդիկի նման զգայուն Թավրիզի շուկան, ինչը կվնասի նախ Հայառին, հետո նաև մեզ: Մենք պատրաստ ենք Հայառի պատվերները կատարել առաջին հերթին և արտոնյալ պայմաններով»¹⁴:

Նամակից պարզ երևում է, որ Անդրպետառի լիազորը անհանգստացած էր Թավրիզում Հայառի գործունեությամբ: Թավրիզի շուկայից Հայառին դուրս մղելու Անդրպետառի շահագրգռվածությունը կարող էր պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ Անդրպետառը կցանկանար Հայաստանին ցորեն մատակարարել իրեն հարմար գնով և մեծ գումարներ վաստակել:

Չնայած գոյություն ունեցող օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններին, այնուամենայնիվ Հայառի վարչությունը կարողանում էր իր գործակալների միջոցով Պարսկաստանում արդյունավետ գործունեություն ծավալել և երկիր ներմուծել առաջին անհրաժեշտության ապրանքներ և հատկապես հացահատիկ:

1925 թ. ապրիլի 15-ին Հայառի և «Ռուստրանգիտ» անունով հանդես եկող ռուս-գերմանական Առևտրատրանզիտային բաժնետիրական ընկերության միջև ստորագրվում է 12 կետից բաղկացած պայմանագիր, որի հիմնական բովանդակությունը հետևյալն էր. «Ռուստրանգիտ»-ը Հայառին վաճառելու էր 100.000 փութ պարսկական ցորեն: Յուրաքանչյուր փութ

¹⁴ Նույն տեղում, թ. 18:

հացահատիկի համար Հայառը «Ռուստրանգիտ»-ին վճարելու էր 9 դրան 50 սանտիմ: Ընդ որում՝ պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում էր միջև հունիսի 15-ը¹⁵:

Սակայն «Ռուստրանգիտ»-ը, ինչպես պարզվում է արխիվային նյութերից, այնքան էլ բարեխղճորեն չէր կատարում իր ստանձնած պարտավորությունները: Հայառը դժգոհ էր նաև Ջուլֆայի գործակալությունից, որն էլ հենց իրականացրել էր ցորենի տեղափոխումը Հայաստան: Այդ մասին նշված է Հայառի վարչության մայիսի 2-ի նամակում, որում ասված է, որ «Ռուստրանգիտ»-ի՝ Պարսկաստանից ուղարկած ցորենը, կեղտոտ լինելուց բացի, լցված է եղել պատառոտված պարկերի մեջ, որի հետևանքով ճանապարհին ցորենի մեծ կորուստ է եղել: Նամակի վերջում վարչությունը գործակալության ուշադրությունն է հրավիրում այս հանգամանքի վրա և կոչ է անում վերջ տալ նման պարկերով ցորեն փոխադրելուն¹⁶:

Մասնավոր անձանց և ընկերությունների հետ պայմանագիր կնքելուց զատ Հայառի վարչությունը քայլեր էր ձեռնարկում պարսկական իշխանությունների հետ ևս հարաբերություններ հաստատելու և պայմանագրեր ստորագրելու ուղղությամբ:

1925 թ. ապրիլի 30-ին Երևանում Պարսկաստանի գլխավոր հյուպատոս Վահդ Օս-Սալթանի գիտությամբ Հայառի և Պարսկաստանի ֆինանսների նախարարության ադրբեջանական ներկայացուցչության ղեկավար Իոսիֆ Ջեմալ խանի միջև (այնուհետև նշվում է Մալիե) կնքվում է առևտրային պայմանագիր, որը բաղկացած էր 11 կետից: Համաձայն պայմանագրի՝ Մալիեն Հայառին պետք է վաճառեր 100.000 փութ ցորեն: Ցորենը պետք է լիներ լավորակ, իսկ խոնավությունը չպետք է գերազանցեր 5 %-ը: 1 փութ ցորենի զինը սահմանվում էր 8 դրան 40 սանտիմ: Մալիեն պարտավորվում էր ցորենի ողջ խմբաքանակը 2,5 ամսում Հայառին հանձնել խորհրդային Ջուլֆայի սահմանին կամ Շահթաթիում, իսկ Հայառը պարտավորվում էր ստանալ ցորենի՝ խորհրդային տարածք մտնելու թույլտվությունը: Պարսկաստանից արտահանելու թույլտվություն ստանալու էր Մալիեն: Ինչպես սովորաբար արվում էր, պայմանագիրը ստորագրված էր 2 օրինակից, որից մեկը մնում էր Հայառում, իսկ մյուսը՝ Մալիեի մոտ¹⁷:

Մայիսի 5-ին Ջեմալ խանի հետ կնքած պայմանագրի պատճենը Հայառը ուղարկում է Արտակարգ հանձնաժողովին¹⁸, իսկ մայիսի 9-ին՝ մեկ այլ պատճեն՝ Ժողկոմխորհի գործերի կառավարչություն¹⁹:

Այս պայմանագրի հետագա ճակատագիրը, ցավոք, արխիվային փաստաթղթերից առայժմ հնարավոր չէրզավ պարզել:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ Պարսկաստանում՝ մասնավորապես Թավրիզում, հացահատիկ ձեռք բերելու ուղղությամբ Հայառի ձեռնարկած քայլերը հիմնականում պսակվեցին հաջողությամբ: Պարսկաստանում հացահատիկի ձեռքբերման գործում Հայառի շահագրգռվածությունը պայմանավորված էր հարևան երկրում հացահա-

¹⁵ Տե՛ս նույն տեղը, թ. 124-125:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 274:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 161:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 174:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 181:

տիկի գնի զգալի ցածր լինելով, ուստի Հայառն այն մատչելի գներով վաճառում էր Հայաստանի տարածքում, իսկ անհրաժեշտության դեպքում արտասահմանում փոխանակում էր այլ ապրանքների հետ: Անշուշտ, դա առաջին հերթին անհրաժեշտ էր տնտեսապես ծանր վիճակում գտնվող Հայաստանին, իսկ Հայառն այս հարցում դրսևորում էր առանձնահատուկ նախանձախնդրություն, որովհետև այդ ճանապարհով Հայառն միջոցներ էր վաստակում իր հետագա գործունեության համար:

Հայառն իր գործունեությունն իրականացնում էր մասնավորապես Անդրպետառի ճնշման և միջոցների բացակայության պայմաններում, սակայն ներդրված ջանքերի շնորհիվ այդ արգելքները հիմնականում կարողանում էր հաղթահարել:

Հացահատիկի ձեռքբերումն ավելի դյուրին էր դառնում նաև այն պատճառով, որ ՅՍԽՅ-ին սահմանակից Յյուսիսարևմտյան Պարսկաստանում ընդհանուր առմամբ բարյացակամորեն էին տրամադրված Հայառնի և Հայաստանի հանդեպ: Այս գործում, հարկավ, էական դերակատարում ունեցր նաև Երևանում պարսկական գլխավոր հյուպատոսությունը:

ГРИГОР БАЛАСАНИЯН – *Из истории армяно-персидских торгово-экономических отношений (1923–1925).* – Статья основана на совершенно новых, до сих пор не опубликованных архивных документах и показывает шаги, осуществлённые Арменторгом и властями Советской Армении для импорта из Персии, особенно из Тебриза, пшеницы. Эти шаги были по преимуществу успешны. Заинтересованность Арменторга в закупе персидского зерна объяснялась значительно более низкими ценами в соседней стране. Закупленное там зерно хорошо продавалось в Армении, а при необходимости обменивалось за рубежом на другие товары. Это было выгодно как Арменторгу, так и республике в целом.

Приобретение зерна не встречало преград, ибо в пограничной с Арменией северо-западной Персии были благосклонно настроены к сотрудничеству с Арменторгом. Важную роль в развитии армяно-персидской торговли сыграло Генеральное консульство Персии в Ереване.

GRIGOR BALASANYAN – *On History of Armenian-Persian Trade-Economic Relations (1923-1925).* – The article is devoted to the research of the Armenian-Persian trade-economic relations in 1923-1925. It has been written due to new, unpublished documents and presents the attempts that were made by the ArmTrade and the Government of Soviet Armenia in order to import the necessary quantity of corn from Persia, especially from Tabriz. The interest of the ArmTrade in getting corn from Persia was conditioned by the fact, that the price for the corn in the neighbouring country was considerably low, and the ArmTrade was able to resell the bread bought from Persia both in Armenia, and if necessary, to exchange with other goods abroad. It was profitable both for the ArmTrade, which was earning means for its further activity and for Armenia.

Buying corn was becoming easier because of the fact, that Persian northwestern regions which had borders with Armenia were favorable for Armenia, too. The main consulate of Persia in Yerevan also had an important role in this matter.